«Բյուրեղավանի  քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի վիրակապարանի հատակը վերանորոգվում է: Տնօրեն Միքայել Միքայելյանի խոսքերով՝ վիրակապարանը կարիք ուներ վերանորոգման և այն համապատասխանեցնել սանիտարահիգիենիկ պայմաններին: 40քմ տարածքում արդեն մի քանի օր է իրականացվում են վերանորոգման աշխատանքները: Ամբողջ շինանյութը տրամադրել է  քաղաքային պոլիկլինիկան, իսկ շինարարական աշխատանքներն իր իսկ նախաձեռնությամբ իրականացնում է համայնքի բնակիչ Սևան Պողոսյանը:  Վարպետ  Սևանը շնորհակալության զգացումով դիմել է տնօրենին, որպեսզի հնարավորություն տա վերանորոգել վիրակապարանը, որտեղ  օրեր առաջ իր մատն են վիրակապել:  Բուժքրոջ մարդկային վերաբերմունքից շոյված, վարպետն իր շնորհակալությունը փոխհատուցեց այսպես:

28.09.16.